ՀԱՐՑԱՇԱՐ

«ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔ

1. **Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական մարմինը մշակույթի ոլորտում (հոդվ. 22)**

   Վարում է մշակույթի ոլորտի վարչական վիճակագրությունը, ինչպես նաև՝ մշակութային կազմակերպությունների հաշվառումը

2. **«Ազգային» կարգավիճակ կարող է շնորհվել (հոդվ. 26.1)**

   Մշակութային գործունեության տվյալ ոլորտը և տեսակը ներկայացնող միայն մեկ կազմակերպության

3. **Հայաստանի Հանրապետության կառավարությունը մշակույթի ոլորտում (հոդվ. 21)**

   Մշակույթի պահպանման, տարածման և զարգացման համար լրացուցիչ ֆինանսական միջոցներ ներգրավելու նպատակով ստեղծում է մշակույթի զարգացման հիմնադրամ և հաստատում դրա կանոնադրությունը

4. **Մշակութային ժառանգության առարկաները (օբյեկտները) տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու առանձնահատկությունները, դրանց նկատմամբ պետական աջակցություն ցուցաբերելու ձևերը սահմանվում են՝ (հոդվ. 16)**

   Օրենքով

5. **ՀՀ-ում մշակութային կազմակերպություններ ստեղծելու իրավունք ունեն՝ (հոդվ. 14)**

   ՀՀ քաղաքացիները

6. Մշակույթի ոլորտում պետական կառավարում իրականացնում է՝ (հոդվ. 22)

ՀՀ կառավարության կողմից լիազորված պետական մարմինը

7. Մշակույթի ոլորտում համայնքի ղեկավարը՝ (հոդվ. 24)

Որպես կամավոր լիազորություն՝ աջակցում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանությանը

8. **Մշակույթի ոլորտում պետությունը՝ (հոդվ. 20)**

Չի միջամտում քաղաքացիների ու մշակութային կազմակերպությունների մշակութային և ստեղծագործական գործունեությանը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի

«ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔ

9. Արխիվային գործի բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը՝ (հոդվ. 5)

Կազմակերպում է Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի պահպանությունը, համալրումը, հաշվառումը և օգտագործումը

10. Համայնքի սեփականություն հանդիսացող փաստաթղթեր են՝ (հոդվ. 11)

Իրավաբանական և ֆիզիկական անձանց՝ համայնքին որպես սեփականություն հանձնած արխիվային փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան

11. Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուում տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային կազմակերպությունների

փաստաթղթերը մինչև մշտական պահպանության հանձնելը, ժամանակավոր պահպանման համար նախատեսված է՝(հոդվ. 19)

5 տարի

12. Հայաստանի Հանրապետության տարածքից Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերն արտահանման (հոդվ. 26)

Ենթակա չեն

13. Մարդու, իսկ մահվանից հետո նրա ժառանգների գրավոր թույլտվության կամ դատարանի որոշման հիման վրա մարդու անձնական և ընտանեկան գաղտնիքի մասին տեղեկություններ պարունակող արխիվային փաստաթղթերը կարող են մատչելի լինել ավելի վաղ, քան դրանց ստեղծման ժամանակից (հոդվ. 22)

100 տարվա ժամկետը

14. Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուում դատական գործերը մինչև մշտական պահպանության հանձնելը, ժամանակավոր պահպանման համար նախատեսված է՝ (հոդվ. 19)

30 տարի

15. Արխիվային գործի բնագավառում համայնքի ղեկավարը (հոդվ. 6)

Ապահովում է համայնքային արխիվի, համայնքային այլ կազմակերպությունների արխիվային փաստաթղթերի համալրումը, հաշվառումը, պահպանությունը և օգտագործումը